

Աշտարակը դարձնենք օրինակելի համայնք



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Համայնք: Աշտարակ

Մարզ: Արագածոտն

Երկիր: Հայաստանի Հանրապետություն

2018

Նախաբան

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության շրջանակում մշակված Աշտարակ համայնքի տնտեսական զարգացման պլանը մշակվել է արդեն գոյություն ունեցող ծրագրային փաստաթղթերի հիման վրա և հանդիսանում է դրանցում նշված համայնքի տնտեսական զարգացման ուղեցույցը 2019-2020 թվականների համար:

Պլանի մշակման ընթացքում ղեկավարվել ենք այն իրագործելու մտադրությամբ, ինչպես նաև հենվելով մեր համայնքի հնարավորությունները՝ համայնքի ֆինանսական կարողությունը, բնակչության թվաքանակը, առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները, ինչպես նաև Աշտարակի բնակլիմայական առանձնահատկությունները: Հաշվի են առնվել նաև համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Վստահ եմ, որ ներկայացվող փաստաթուղթը իրականություն կդառնա համայնքի բոլոր ուժերի՝ գործարարների, քաղաքացիական հասարակության հետ սերտ համագործակցության արդյունքում:

Համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյան

Պլանի օրինակն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել.

Անուն՝ Արթուր Վազգենի ՈՍԿԱՆՅԱՆ

Պաշտոն՝ Աշտարակի համայնքի ղեկավարի խորհրդական, տեղական տնտեսական զարգացման պատասխանատու

Հասցե՝ Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ:

Հեռախոս՝ /0232/ 3-10-26, /093/ 59-22-22

Էլ հասցե՝ Voskanyan.a@aragatsotn.ashtarak.am; arthvoskanyan@gmail.com

Կայք՝ www.ashtarak.am

1. Ամփոփագիր

Աշտարակը՝ 1996թ.-ից Արագածոտնի մարզկենտրոն, ունի մի շարք մրցակցային առավելություններ պայմանավորված շահավետ աշխարհագրական դիրքով, յուրահատուկ բնակլիմայական պայմաններով, տնտեսության կառուցվածքով, ինչպես նաև բնակչության հմտություններով և որակներով:

SWOT վերլուծությունը բացահայտեց որ, համայնքի համար հեռանկարային է հյուրընկալության՝ զբոսաշրջության, ռեստորանային գործի, ինչպես նաև հյուրանոցների հատվածը: Անհրաժեշտ է զարգացնել նաև գյուղմթերքի մշակումը հենվելով ավանդական չրագործության մարդկանց հմտությունների վրա: Տնտեսության այս հատվածը պետք է հզորացնել զարգացնելով բրենդավորումը և նոր շուկաներ մտնելը:

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության զարգացման գիտահեն ոլորտների զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը, Աշտարակը նույնպես ունի լուրջ նախադրյալներ այս ոլորտում հաճողությունների համար: Սակայն դրա համար անհրաժեշտ են զգալի ֆինանսական ներդրումներ, ինչպես նաև համայնքում գործող գիտական հաստատությունները և ՏԻՄ-ի սերտ համագործակցությունը:

Համայնքի զարգացման տեսլականով ունենք վերականգլված, արդիականացած և զարգացող ավանդական ոլորտներ՝ մառանային գինեգործություն, հացատներ, հյուրատներ, և գյուղմթերքի վերամշակող ընկերություններ: Համայնքում զարգանում է զբոսաշրջությունը, գինեգործությունը, գյուղմթերքի վերամշակումը, ինչպես նաև գիտահեն արտադրությունը:

Աշտարակցիները իրենց աշխատանքով ապահովել են իրենց բարձր կենսամակարդակը, նրանք ապրում, սովորում և աշխատում են իրենց սիրելի քաղաքում:

Համայնքի հիմնական նպատակներն են

1. խոհարարական և գինեգործական տուրիզմի զարգացում,
2. որպես գյուղմթերքի վերամշակման և արտահանման կենտրոնի կայացում:
3. Գիտահեն արտադրության զարգացում:

Համայնքի տեսլականի և նպատակների իրականացման համար նախատեսվում են հետևյալ գործողությունները:

- Քաղաքի որպես հայկական ավանդական ժողովրդական ճարտարապետության կրողի դիրքավորում և առաջնություն: Աշտարակի, որպես յուրահատուկ զբոսաշրջային ուղղության գովազդում կայքէջի և սոցիալական ցանցերի միջոցով:
- Զբոսաշրջության ոլորտում ներգրավված բնակչության կարողությունների զարգացում՝ վերապատրաստում: Նոր հյուրատների բացման խթանում: Ռեստորանների աշխատանքի վերակազմակերպում՝ կերակրացանկի, սպասարկման որակի բարձրացում:
- Գյուղմթերքի վերամշակման կենտրոնի բրենդի ձևավորում և առաջնություն: Արտահանման ծավալների ավելացում սպառման նոր շուկաների հաշվին:

Վերջին երկու տարիների ընթացքում համայնքի ծրագրերի իրանացման համար օգտագործել ենք սեփական միջոցները և սկսել համագործակցությունը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, և գերմանական GIZ կազմակերպությունների հետ: Աշխատանք է արվում ձևավորել արտերկրում բնակվող աշտարակցիների հետ քաղաքի զարգացման գործում իրենց ներդրումն անելու համար: Մենք շարունակելու ենք գործել նույն տրամաբանությամբ, փնտրելով լրացուցչի ֆինանսավորման պետական, մասնավոր և միջազգային դոնորների աղբյուրներ:

2. Բովանդակություն

1.	Ամփոփագիր	3
2.	Բովանդակություն	4
3.	Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ	5
4.	Պլանի ներածություն	7
5.	Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը	8
6.	Տեղական տնտեսության վերլուծություն	9
6.1	Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն	10
6.2	Տեղական համագործակցություն	18
6.3	Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն	21
6.4	Ֆինանսական միջոցների հասանելիություն	23
6.5	Հող և ենթակառուցվածքներ	25
6.6	Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ	27
6.7	Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն	29
6.8	Արտաքին դիրքավորում և մարքեթինգ	32
7.	SWOT վերլուծություն	34
8.	Տեսլական և նպատակներ (ներառյալ ակնկալվող արդյունքները)	36
9.	Գործողությունների ծրագիր	37
10.	Ֆինանսավորման սխեմա	1
11.	Մոնիտորինգի ցուցանիշներն ու մեխանիզմները	1
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	1
	Հավելված Ա. Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը	1

3. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ

Աղյուսակ 1. Ընկերությունների դասակարգումը՝ ըստ չափերի	15
Աղյուսակ 2. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը	15
Աղյուսակ 3. Տեղական գործընկերության գնահատում	18
Աղյուսակ 4. Զարգացող ոլորտները (ենթաօլորտները) և դրանց խնդիրները	21
Աղյուսակ 5. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն	23
Աղյուսակ 6. Հողի և ենթակառուցվածքների նկատմամբ մասնավոր հատվածի կարիքները	25
Աղյուսակ 7. Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ	27
Աղյուսակ 8Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը	29
Աղյուսակ 8Բ. Պահանջվող հմտությունների և զբաղվածության հնարավորությունների միջև հավասարակշռության ապահովումը տեղական մակարդակում. համակարգային վերլուծություն	30
Աղյուսակ 9. Համայնքի ընկալումը բնակիչների կողմից	32
Աղյուսակ 10 SWOT վերլուծություն	34
Աղյուսակ 11.1 Գործողությունների ծրագիր Նպատակ 1	39
Աղյուսակ 11.2 Գործողությունների ծրագիր Նպատակ 2	41
Աղյուսակ 11.3 Գործողությունների ծրագիր Նպատակ 3	42
Աղյուսակ 12. Ֆինանսավորման սխեմա	47
Աղյուսակ 13. Աղյուսակ 11-ում ներկայացված գործողությունների ներքին մոնիտորինգի պլան	49
Աղյուսակ 14. Գործողությունների նկարագրություն	53

Հապավումներ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՀՀՏՀ – համայնքապետերն հանուն տնտեսական զարգացման
ՀՀՏԿՀ – Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՔՀԿ – քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՓՄՁ ԶԱԿ – փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
SWOT – ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և մարտահրավերներ
ՏՏ – տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՀՈԱԿ – համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ
ՏԻՄ – տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏՀ – տեղական տնտեսական զարգացում
ԱԺ – ազգային ժողով
ՄԱԿ – միավորված ազգերի կազմակերպություն
ՀԿ – հասարակական կազմակերպություն
ՄԱԶԾ – միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)
GIZ - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
JICA - Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
BA/DFA – Բիզնես Հայաստան (Հայաստանի զարգացման հիմնադրամ)
ՄԿՈՒԶԱԿ – մասնագիտական կրթության և ուսուցման ազգային կենտրոն
ԳՀՀ – Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամ
ԱՄՆՄՀԳ - ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԵՄ – Եվրոպական միություն
ՀՀ ԳԱ ՖՀԻ – ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (ԴՈԱԿ)
ՀՀ ԿԲ – Հայաստանի հանրապետության Կենտոնկան բանկ

4. Պլանի ներածություն

Աշտարակ համայնքը միացել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Նախաձեռնությանը լիազորելով համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանին Աշտարակ համայնքի ավագանու 25.05.2017թ. –ի հմ. 1-Ա որոշմամբ:

Աշտարակ համայնքը՝ 1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն, գտնվում է Երևանից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 20կմ հեռավորության վրա: Հեռավորությունը Զվարթնոց օդանավակայանից 29կմ: Միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1075մ: Հանդիսանում է ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ, գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում:

Աշխատունակ բնակչության մասնաբաժինը (ընդհանուր և սեռային հարաբերակցությամբ), տարիքային, 17-21 առկա/մշտական; կին - (15-19) – 637/646; (20-24) – 886/932; տղամարդ - , 22-35 առկա/մշտական; (20-24) 892/946; (30-34) 657/719; կին – (35-49) 1802/1839, տղամարդ - (35-49) 1743/1880, 36-50; կին - (50-74) 2429/2150, տղամարդ -1859/1993 , 50 -75 կին – 521/529, տղամարդ - , 76-ից բարձր կին – 521/529, տղամարդ - 300/310,

Բնակչության մասնաբաժինը ըստ բնակավայրերի՝ քաղաքային 80%, գյուղական 30%: Միջին տարիքը (բաժանված ըստ սեռի), Միգրացիոն հոսքերը (դեպի համայնք են գալիս հիմնականում Երևանից՝ որպես երկրորդ բնակավայր, մշտական բնակության Զավախքից, 1990-ականներին Բաքվից և Սումգաիթից: Հակառակ ուղղությամբ՝ մեկնում են երկարատև արտագնա աշխատանքի դեպի Ռուսաստանի Դաշնություն, Եվրոպական երկրներ և ԱՄՆ): Մեծ է Երևան աշխատանքի գնացողների թիվը:

Աշտարակը կարևորում է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը որպես լրացուցիչ հնարավորություն տեղական մակարդակում տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնող, ինչպես նաև ապահովելու, որպեսզի ՏԻՄ-ը հնարավորություններ ստեղծի տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման և համայնքի բարեկեցության ու կենսամակարդակի բարձրացման համար: Համագործակցություն ձևավորի համայնքի գործարարների հետ:

Որպես աջակցություն համայնքի տեղական բիզնեսներին՝ հասարակական սնունդ, գինեգործներ, առևտուր, սննդի մանր արտադրողներ, որոնք կարող են համայնքում նոր աշխատատեղեր ստեղծել, (տուրիստական հոսքերի ավելացման արդյունքում), գյուղմթերքի արտահանման համար նոր շուկաներ ձեռք բերել, ինչպես նաև համայնքի ենթակառուցվածքների զարգացման առումով:

Սույն ՏՏԶ պլանը մշակվել է համայնքի կողմից մշակված ծրագրերի և փաստաթղթերի համան վրա: Մասնավորապես օգտագործվել է «Աշտարակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶՀԾ)», 2018թ. Տարեկան Աշխատանքային պլանը, Աշտարակ համայնքում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտի զարգացման հայեցակարգը:

Այս Տեղական տնտեսական զարգացման պլանը մշակված է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը մասնակցելու նպատակով, այն համընդգրկուն չէ և չի փոխարինում գոյություն ունեցող ծրագրերին, հիմնականում կենտրոնացած է մասնավոր հատվածի զարգացման վրա՝ խթանելու համար աճը, զարգացումն ու զբաղվածությունը:

5. Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը

Աշտարակ համայնքի ՏՀՊ մշակման ընթացքը ժամանակային առումով համընկել է համայնքում հյուրընկալության ոլորտի զարգացման նախաձեռնության իրականացման հետ: Որը մշակել ենք հենվելով համայնքի մրցակցային առավելությունների մասը կազմող զբոսաշրջության և մառանային գինեգործության ոլորտների վրա:

Աշխատանքի ընթացքում ձգտել ենք տեղեկացնել և գործընթացին ներգրավել համայնքի հիմնական դերակատարներին ինչպես տնտեսական ոլորտում, այնպես էլ ՀԿ-ների դաշտից: Աշխատանքային հանդիպումներ ենք ունեցել Աշտարակի նախքին ղեկավարների հետ, որոնք լուրջ օգնություն են ցուցաբերել իրենց մտքերով և համայնքի իմացության փորձով:

Մասնակցային սկզբունքներին հետևելով կատարել ենք հետևյալ քայլերը:

- Աշխատանքային հանդիպումներ և զբոսաշրջության և տնտեսական զարգացման խորհրդի ստեղծում (Համայնքի ղեկավարի կարգադրություն 25 հունվարի 2018թվականի N 21 -Ա), որի կազմում ընդգրկվեցին մառանային՝ տնայնագործ գինեգործներ, ինչպես նաև անհատներ ովքեր զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման ցանկություն և հնարավորություն ունեն:
- Աշտարակի գրավիչ կերպարը ձևավորմանը նպաստող մշակութային և այլ միջոցառումների իրականացման հանձնաժողով: Համայնքի ղեկավարի կարգադրություն (25 հունվարի 2018թվականի N 22 -Ա)
- ՀՀ ՓՄՁԱԿ-ի Արագածոտնի մասնաճյուղի հետ ս.թ. մարտ – ապրիլ ամիսներին սկսնակ բիզնեսների “Հաջող սկիզբ” վերապատրաստման դասընթացի իրականացում:

Բացի նշված ոլորտից, զուգահեռ անհատական և խմբային հանդիպումներ են իրականացվել տեղական արտադրողների, գիտական կազմակերպությունների ինչպես նաև արվեստի և մշակույթի ոլորտների դերակատարների հետ:

Ներկայացված համագործակցության համար գլխավոր պայմաններն էին ՏԻՄ-ի կողմից մասնավոր հատվածի խնդիրների հասկանալը և դրանք համատեղ ջանքերով վերացնելու համատեղ պլանավորված աշխատանքը:

Միաժամանակ դիմել էինք Հայաստանում գործող միջազգային դոնոր կազմակերպություններին, որոնցից այս փուլում համագործակցության հասանք գերմանական GIZ-ի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ինտեգրված գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի հետ:

6. Տեղական տնտեսության վերլուծություն

Աշտարակ համայնքը գտնվում է Երևանից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 20կմ հեռավորության վրա: Քաղաքը զբաղեցնում է 7,5 քառ. կմ տարածք ներառյալ Մուղնին: Հեռավորությունը Ջվարթնոց օդանավակայանից 29կմ: Միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1075մ: Հանդիսանում է ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ, գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման կետում: Աշտարակը ունի կանոնավոր ավտոբուսային փոխադրումներ ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ հարևան գյուղական համայնքների հետ:

Աշտարակի բնակչության թիվը, 2016 թ. հունվարի 01-ի դրությամբ, պաշտոնական տվյալների¹ համաձայն կազմում է 23596 մարդ, որից կանայք 12167, տղամարդ 11429: սակայն փաստացի թիվը գնահատվում է մոտ է 16000 բնակիչ: Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 5478: Գործազուրկների թիվը 2018 առաջին կիսամյակի համար՝ կին - 990 տղամարդ -541:

Աշտարակ համայնքը 1996թ-ից հանդիսանում է Արագածոտնի մարզկենտրոն և ունի այդ կարգաիճակին համապատասխանող վարչական կառույցներ: Աշտարակում են գտնվում Արագածոտնի մարզպետարանը, մարզի դատախազությունը, մարզի վիճակագրական ծառայությունը:

Տեղական տնտեսության կառուցվածքը

Համայնքի տնտեսության տվյալները ստացված են բաց աղբյուրներից, համայնքապետարանի համապատասխան բաժինների տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա, համայնքի վիճակագրական ծառայություններից, Զբաղվածության կենտրոնից, փորձագիտական հարցման՝ մասնավորապես համայնքապետարանի աշխատակիցների, բանկերի մասնաշյուղերի կառավարիչների, ինչպես նաև Աշտարակում գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների փորձագետների հետ ունեցած հարցազրույցի միջոցով, Արագածոտնի առևտրա-արդյունաբերական պալատի աշխատակիցների, և համայնքի տարբեր գործարարների հետ անցկացրած հանդիպումների արդյունքում:

Աշտարակի տնտեսության կառուցվածքը բաղկացած է հետևյալ ձեռնարկություններից և հիմնարկներից ըստ ոլորտների:

¹ Աշտարակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր (ՀԶՀԾ), էջ. 6:

6.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Արդյունաբերություն

Աշտարակում է գտնվում ցելոֆանի տոպրակներ արտադրող Անի Պլաստ ընկերությունը, որն այս պահին ունի 30 աշխատատեղ, իսկ շրջանառության ծավալներով այս տարեվերջին կդասվի որպես խոշոր հարկ վճարողներ:

Սափֆիր սալը – արհեստական բյուրեղների մշակում և արտահանում, որն ունի 30 աշխատատեղ, և հետաքրքրված է նոր գործընկերներ և սպառման շուկաներ գտնել:

Աշտարակի “Գիտավան” թաղամասում գործում է 1994 թ. հիմնադրված “Erebouni Biosecurity” համատեղ ձեռնարկությունը որն արտադրում է կենցաղային քիմ. աղտահանման միջոցներ շուրջ 150 անվանում, 4 ոլորտների՝ սննդի արտադրություն, հյուրընկալության, գյուղատնտեսության և ավտոմեքենաների խնամքի ոլորտների համար: 2008 թվականից ընկերությունը արժանացել է ISO 14001 սերտիֆիկացմանը շրջակա միջավայրի և արտադրության ոլորտի համար: Սեփականատիրոջ հետ անմիջական կապ հաստատվու մեր բոլոր փորձերն ապարդյուն էին: Ներկայացվող տեղեկությունը վերցրեն ենք իրենց կայքէջից: Այն որ այս բիզնեսն աշխատում է և զարգանում, հաստատում են նաև համայնքի մյուս գործարարները:

Կարի հինգ արտադրամաս – 25-30 ընդրահուր աշխատեղով:

Պոլիգրաֆիական գործարան – տպարան ընդամենը 7-9 աշխատող:

Աշտարակում են գտնվում «Գազպրոմ Արմենիա» փբը, ինչպես նաև Արագածոտնի գգմ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» «մուսալեռ» մասնաճյուղի գրասենյակները:

Գյուղատնտեսություն և գյուղմթերքի վերամշակում

Հնագույն ժամանակներից Աշտարակը, շնորհիվ յուրահատուկ աշխարհագրական դիրքի և բնակլիմայական պայմանների, ունեցել է գյուղմթերքի վերամշակման և գինեգործության հարուստ փորձ և ավանդույթներ: Այժմ Հայաստանյան շուկայում շատ հայտնի են, և ավանդական պահանջարկ ունեն ծիրանի, սալորի և խնձորի աշտարակյան չրեղենը: Աշտարակյան ընկույզի սուջուխն ու ալանին համարվում են հայկական ամանորյա սեղանի պարտադիր բաղադրիչներ: Իսկ աշտարակյան ընկույզը տեղ է գտել նաև ժողովրդական բանահյուսության մեջ: Գրեթե ամեն ընտանիք իրենց համար չիր, մուրաբաներ և ընկույզի քաղցր սուջուխ և ալանի են պատրաստում: Արտադրածի ավելցուկը իրացվում է շուկայում: Նշված թվի մոտ 20% -ի համար այս չրեղենի արտադրությունն ու վաճառքը հանդիսանում է լրացուցիչ սեզոնային եկամուտի աղբյուր:

Աշտարակի տարածքում 2017 թ. գործում օրգանական սննդով զբաղվող “Ագրոլոգ” ընկերությունը: Գյուղմթերքի մթերման և վերամշակման սեզոնին ընկերությունում աշխատում է մինչև քսան մարդ: Նախորդ տարվա շրջանառությունը կազմել է 30 մլն. Դրամ, այս տարի նշված ցուցանիշը նախատեսվում է հասցնել հիսուն մլն. դրամի:

Համայնքի տարածքում կա տնկարան:

Հարցման ընթացքում բացահայտվել է Աշտարակում գործող՝ հավի ճտերի աճեցման և հետագա իրացման գյուղատնտեսության ոլորտի բիզնես, որի տարեկան շրջանառությունը սեփականատիրոջ խոսքի համաձայն, տարեկան կազմում է 40-45 մլն. դրամ: Ձեռնարկությունում զբաղված է երեք աշխատող,

Շինարարություն

Եվրոդոլների և պատուհանների արտադրամաս – 15, 45-55 աշխատողներ:
Շինարարություն – 2 ընկերություն, 30 աշխատողով, որոնք աշխատում են Աշտարակից դուրս:

Տրանսպորտ

Աշտարակում իրենց մասնաճյուղերն ունեն Հայաստանի բջջային կապի բոլոր օպերատորները, ինչպես նաև Ռոստելկոմի սպասարկման գրասենյակը: Այս գրասենյակներում աշխատողների ընդհանուր թիվը հասնում է մինչև 30 աշխատող:

Աշտարակում պաշտոնապես գրանված է երկու տաքսի ծառայություն, որոնցում աշխատում են 45-50 մարդ:

Առևտուր

Քաղաքն ունի զարգացած առևտրային ցանց ավելի քան 125 պարենային (ներառյալ երեք սուպերմարկետները), և շուրջ 34 ոչ պարենային խանութներ, ներառյալ՝ կոշիկի, հագուստի, վարագույրների կտորեղենի, բիժուտերիայի, ավտոպահեստամասերի և այլ մասնագիտացված մանրածախ խանութներ, ինչպես նաև ոսկերչական չորս սրահներ որոնցում, փորձագիտական գնահատմամբ աշխատում է 1000-ից 1300 մարդ:

Աշտարակում գործում է մեկ գյուղատնտեսական շուկա 15 տեղ, հագուստի մեկ տոնավաճառ – 20 տեղ:

Բանկեր և ֆինանսական ծառայություններ

Քաղաքում գործում է ֆինանսաբանկային ոլորտի 12 կազմակերպություն որոնցից բանկեր – 8, վարկային կազմակերպություն – 4:

Աշտարակում գործում է յոթ ապահովագրական գրասենյակ, որոնք ներկայացնում են Հայաստանի գլխավոր ապահովագրական ընկերությունները՝ Ռեսո (RESO), Ինգո Արմենիա, (IngoArmenia), Ռոսգոսստրախ (Rosgosstrakh), Սիլ խնշուրանս (SIL Insurance), Նաիրի ինշուրանս (Nairy Insuranse), Արմենիա ինշուրանս (Armenia Insuranse):

Աշխատողների թիվը յուրաքանչյուր կազմակերպությունում տատանվում է 5-13 միջև: Ուստի այս ոլորտում առկա աշխատանքային տեղերի թիվը կարող է հասնել 250-ի:

Հասարակական սնունդ

Աշտարակցիները ավանդաբար պահպանում են հայկական կերակուրների բաղադրատոմսերը, ինչը միաժամանակ ինչպես առանձին խթանիչ գործոն է զբոսաշրջության զարգացման՝ մասնավորապես խորարարական և գինեգործական տուրերի:

Ռեստորանային գործի զարգացման հետ է կապված նաև Աշտարակում գործող ուսումնարանը² խոհարարների պատրաստման ընտրությունը:

Սրճարաններ 6, Ռեստորաններ – 6, հացատուն – 3, արագ սննդի վաճառք – 4

Սննդի արտադրություն

Հացի փուռ – 17: Սուրճի փաթեթավորում – մեկ խոշոր տարեկան մինչև 15 մլն. դրամ:

Լիմոնադի շալցման երկու արտադրամաս, երկուսն էլ ամսական մինչև 1մլն. դրամ շրջանառությամբ:

² ՀՀ ԿԳՆ «Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Կաթի արտադրություն՝ Մուղնի թաղամասում “Վանա կաթ”։ արտադրում է տնական պանիր, մածուն, թթվասեր։ Ծավալների, աշխատողների թվի, և տարեկան շրջանառության մասին տեղեկություն չունենք։

Աշտարակի աշխատաշուկայի պատկերի էական ազդեցություն չունեն Աշտարակին մոտ գտնվող, ձեռնարկությունները³։

Կրթություն

Աշտարակում գործում է յոթ դպրոց՝ վեց միջնակարգ, և ավագ՝ Ն.Սիսակյանի անվան No 5 դպրոցը։ Համայնքն ունի նաև մեկ երշաժշտական և մեկ գեղարվեստի, մարզային պատկանելիության մեկ մարզադպրոց, ինչպես նաև Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը։ Աշտարակում գործում է չորս համայնքային մանկապարտեզ, որոնցում աշխատում է 127 աշխատող, և դաստիարակվում է 610 երեխա, և մեկ մասնավոր մանկապարտեզ։

Աշտարակն ունի մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿԳՆ «Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ, որը մասնագետներ է պատրաստում հետևյալ երեք ուղղություններով՝ հասարակական սնունդ, զարդակիրառական արվեստ և կարի արտադրության տեխնոլոգիա։ Ուսումնարանն ունի 116 սովորող և 31 աշխատող։

Գործում է անգլերեն լեզվի դասընթացներ իրականացնող մասնավոր ուսումնական կենտրոն։

Համայնքում չկան բարձրագույն ուսումնական հաստատություններ, կամ դրանց մասնաճյուղեր, ինչը պայմանավորված է մայրաքաղաքին մոտ լինելով։

Գիտություն

Խորհրդային տարիներից Աշտարակում գործում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, և ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները։ Որոնք գործում են որպես ՊՈԱԿ-եր ՀՀ ԳԱԱ համակարգում, և իրականացնում են հետազոտական, գիտական և ուսումնական աշխատանքներ։

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եվ էլեկտրոնիկայի ինստիտուտ (ՊՈԱԿ)։ ՌՖԷԻ-ում աշխատում է 150 մարդ, որոնցից 45-ն ունեն գիտությունների դոկտորի կամ պրոֆեսորի աստիճան։ Ինստիտուտը զբաղվում է մի շարք գիտական և կիրառական աշխատանքներով ինչպես պետական այնպես էլ միջազգային գրանտների ֆինանսավորմամբ։

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (ՊՈԱԿ)։

Այս գիտական հաստատության առաջնային նպատակն է հիմնարար հետազոտություններում, կիրառական մշակումներում և նորարարության մեջ գերազանցության հասնելը՝ միտված հայկական գիտության, տնտեսության ու հասարակության, ինչպես նաև Ինստիտուտի անձնակազմի բարեկեցությանն ու բարգավաճմանը։

Նման գիտական ներուժ ունեցող հաստատությունների առկայությունը համայնքի համար կարող է հիմք հանդիսանալ գիտահեն արտադրություն կազմակերպելու համար։

³ Թամարա Ֆրուտ- Կարբի-15, Աշտարակ կաթ- Ագարակ-10։

Ինստիտուտի տնօրենի հետ քննարկել ենք համագործակցության հնարավորություններ: Սակայն այս պահին համայնքը չունի պատրաստի առաջարկ այս հաստատության համար:

Առողջապահություն

Աշտարակի առողջապահական հաստատությունների համակարգը բաղկացած է հետևյալ հիմնարկներից:

Մարզային պատկանելիության բժշկական կենտրոն – 1, մարզային հիվանդանոց – 150 աշխատող, ատամնաբուժարաններ – 10, ինչպես նաև 23 դեղատուն:

Զբոսաշրջություն

Չնայած այն բանին որ Աշտարակում կան բազմաթիվ պատմա-ճարտարապետական հուշարձաններ, հայկական քաղաքային՝ ժողովրդական տների ճարտարապետությունը ներկայացնող յուրահատուկ շինություններ, ներգնա զբոսաշրջության ոլորտը չի հանդիսանում քաղաքի տնտեսության ուժեղ կողմը: Քաղաքն ունի խորհրդային տարիներին կառուցված մեկ բազմահարկ հյուրանոց որը չի գործում: Քաղաքում գործում են 4 մասնավոր տուրիստական կացարաններ՝ 30 մահճակալ տարողությամբ: Սակայն այս քանակությունը բավարար չէ լուրջ ներգնա՝ գիշերակաց ներառող տուրիստական փաթեթներ առաջարկելու համար:

Այս խնդիրը լուծելու նպատակով, 2017 թվականին ՀՀ ՓՄՁԱԿ-ի Արագածոտնի մասնաշրջոյի հետ նախագծել ենք հատուկ դասընթաց սկսնակ գործարարների համար: 2018թ. մարտ-ապրիլ ամիսներին հյուրընկալության և սպասարկման ոլորտի սկսնակ 25 ձեռնարկատերերի համար իրականացվեց վերապատրաստման՝ CEFE դասընթաց, որի շրջանավարտներին հինգը ստացան արտոնյալ վարկավորում, և սկսել են իրենց բիզնեսների հզորացման աշխատանքները:

Ներգնա զբոսաշրջության ոլորտի մեր հաջորդ կիզակետը մառանային գինեգործների առաջարկի վրա կազմակերպվող գինեգործական տուրերի մշակումն է:

Աշտարակի գրեթե բոլոր հին սեփական տներում կան մառաններ, որոնք այս օրերին ապրում են իրենց վերածնունդը: ՄԱԿԶԾ (UNDP IRTD) ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ ձևավորվում է մառանային գինեգործների նոր խումբ որոնց շնորհիվ Աշտարակում և մարզում զարգանում է գինեգործական տուրիզմը: Ուստի քաղաքի գինեգործության հարուստ փորձն ու ավանդույթները օգտագործվում են համայնքի տնտեսական զարգացման համար:

Հյուրընկալության ոլորտ: Ռեստորաններ և կացարաններ, հանգստի գոտիներ

Աշտարակի տնտեսության համար կարևոր դեր են կատարում սպասարկման և հասարակական սննդի կազմակերպման ձեռնարկությունները:

Քասախի կիրճը և այնտեղ գործող չորս ռեստորաններն ու հինգ հանգստի գոտիները՝ սեզոնին ապահովում են շուրջ ութսուն աշխատանքային տեղ:

Այլ ծառայություններ

Անշարժ գույք և կադաստրային չափագրում – 3, Մեքենաների ներմուծում և վաճառք – 2:

Իրավաբանական ծառայություններ են տրամադրում մեկ փաստաբանական գրասենյակ և մեկ հասարակական կազմակերպություն:

Ճարտարապետական և շինարարական ձեռնարկություններ: Ըստ պաշտոնական տվյալների Աշտարակում կա գրանցված շինարարական երկու կազմակերպություն որոնք մրցութային սկզբունքով շինարարություն են իրականացնում Աշտարակից դուրս, և էականորեն չեն ազդում համայնքի աշխատաշուկայի պատկերի վրա:

«ՀԱՅՓՈՍ»-ն Աշտարակում ունի չորս մասնաճյուղ:

Տնտեսության կառուցվածքի ամփոփում

Ամփոփելով Աշտարակի տնտեսության կառուցվածքը համարում ենք որ այս պահին համայնքում դեռ չի կարելի առանձնացնել տնտեսության՝ որպես դինամիկ զարգացող, որևէ ճյուղ: Սակայն շնորհիվ համայնքի ղեկավարի նախաձեռնած հյուրընկալության և զբոսաշրջության զարգացման ծրագրի, նման “տնտեսական լոկոմոտիվային” ոլորտ է դառնում ներգնա զբոսաշրջությունը, իր հետևից տանելով կից բիզնեսները:

Որոնցից առաջին խումբը կազմում են տնային պայմաններում աշխատող գինեգործ մառանները, ովքեր որպես շուկայական թիրախ են ընտրել տուրիստական շուկան: Նման մառանների թիվը նախորդ տարվա համեմատ, ավելացել է 3-ով: Համայնքի տնտեսական աճի հաջարդ կետը զբոսաշրջային ծառայությունների սեկտորում գործող հացատներն ու հյուրատները:

Նշված ոլորտների զարգացումը հնարավոր է դարձել ՄԱԿ-ի «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի հետ համագործակցության շնորհիվ:

Այս ոլորտի զարգացումը ուղղակիորեն նպասելու է նաև հասարակական սննդի՝ ռեստորոնների և սրճարանների զարգացմանը որոնցում 2017 թ. ընթացքում սպասարկվող հյուրերի թիվը ըստ փորձագիտական մոտավոր գնահատականների, տուրիստական բարձր սեզոնին կազմել է 2500-3000, իսկ ցածր սեզոնին՝ 1000 հաճախորդ:

Այս ոլորտի աճի նկարագրում են հետյալ ցուցանիշները: Նախորդ տարվա համեմատ բացվել են չորս նոր հացատներ և մեկ երիտասարդական սրճարան: Ինչը մոտ 35% ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Կանխատեսվում է նաև մասնավոր տուրիստական կացարանների աճ: Եթե 2016-ին Աշտարակում ունցել ենք 2-3 պաշտոնապես գործող հյուրատուն – կացարան, ապա այս տարի դրանց թվին է ավելացել ևս 3 հուրատուն: Այս ցուցանիշը շարունակելու է աճել կախված Աշտարակի հանդեպ զբոսաշրջիկների և տուրիստական ընկերությունների կողմից աճող հետաքրքրության և մատուցվող ծառայությունների բազմազանությանը և որակին:

Մշակվել են և ներկայացվել տուրիստական ընկերություններին քաղաքի տուրիստական հետիոտն երթուղիները:

Այս ոլորտի մաս են կազմում Քասախի կիրճում տեղակայված հանգստի գոտիները: Հայաստանի անկախացման տարիներից ի վեր ձեռնարկատիրության այս հատվածը հադիսանում է ամենակայուն և որոշակի քանակությամբ աշխատատեղեր ապահովող ոլորտ: Սա պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ Երևանին մոտ լինելը և կիրճի գեղեցիկ բնություն գետի ափին: Գործարարների կողմից ծառայությունների կատարելագործումն ու հաճախորդի պահանջարկին հետևելը: Սակայն սահմանապակված լինելով կիրճի տարածքով այս ոլորտում չի կարող լինել քանակական կտրուկ աճ, և աշխատեղերի ավելացում: Գործարարների ջանքերն ուղղված են նաև ձմեռային հանգստի պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Գիտակցելով միակողմանի՝ միայն ներգնա զբոսաշրջության վրա հենվող տնտեսության զարգացման վտանգները, մեր աշխատանքային խումբը առանձնացնում է մեր համայնքի համար հեռանկարային հաջորդ ճյուղը որն ավանդաբար համարվում գյուղմթերքի վերամշակումը՝ ընկույզի քաղցր սուջուխի, ալանիների, և տարատեսակ պտուղների չրերի պատրաստումը:

Չնայած որ այս ոլորտի մասին չունենք սպառիչ թվային տվյալներ ինչպես օրինակ հասարակական սննդի և զբոսաշրջության դեպքում, սակայն անուղղակի գնահատմամբ, հաշվի առնելով տուրիստական այցելությունների թվի աճը, ինչպես նաև Աշտարակի իմիջի ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքը, այս ոլորտը որպես զբոսաշրջությանը հետևող ոլորտ կունենա զարգացում 30-45% աճի ցուցանիշով:

Աշտարակ համայնքում գրանցված ընկերություններից ըստ շրջանառության և շահույթի արդյունավետ են Երևան – Աշտարակ մայրուղու վրա գործող ԱԳԼՃ կայանները: Որոնց թիվն աճել է վերջին երկու տարիներին:

Արժեչղթաների մաս կազմող ոլորտներ են հանդիսանում գյուղմթերքի վերամշակման՝ չրի արտադրություն և գինեգործության ոլորտները:

Իր արժեչղթայի ստեղծման գործում տեղական մատակարարների և ռեսուրսների վրա է հիմնվում Ագրոլոգ ընկերությունը:

Ինչպես նշեցինք համայնքի յուրօրինակ ապրանքներ են հանդիսանում չրեղենն ու գինին, իսկ ծառայությունների առումով Քասախ գետի կիրճի հանգստյան գոտիները:

Աղյուսակ 1. Ընկերությունների դասակարգումը՝ ըստ չափերի

Անվանում	Աշխատողների թվաքանակ
Միկրո (անհատ ձեռներեց)	1 – 14
Փոքր	15 – 100
Միջին	101 – 250
Խոշոր	Ավելի քան 250

Աղյուսակ 2. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը

Տնտեսական գործունեության տեսակ	Ձեռնարկությունների թիվ ու տոկոս (ըստ դասակարգման)								Ընդամ
	Միկրո	%	Փոքր	%	Միջին	%	Խոշոր	%	
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն, գյուղմթերքի մշակում, ալրաղաց, տնկարան, թոջնաբուծություն, ճագարաբուծություն	13	76,5	4	23,5	0	0	0	0	17
2. Արդյունաբերական արտադրություն	13	61,88	3	14,28	5	23,8	0	0	21

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

3. Շինարարություն, կառուցապատում	5	71,5	2	28.5	1	0	0	0	8
4. Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, փոստային և առաքման ծառայություններ	6	66,66	3	33,33	0	0	0	0	9
5. Կապի ծառայություններ	2	40	3	60	0	0	0	0	5
6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայություններ	3	100	0	0	0	0	0	0	3
7. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	19	100	0	0	0	0	0	0	19
8. Իրավաբանական ծառայություններ (նոտար, փաստաբան)	4	100	0	0	0	0	0	0	4
9. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	4	100	0	0	0	0	0	0	4
10. Բիզնես ծառայություններ (դասընթացներ, խորհրդատվություն, շուկայի ուսումնասիրություն, PR, գովազդ, տպագրություն)	4	100	0	0	0	0	0	0	4
11. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն (հաշվապահություն, ճարտարապետություն, ճարտարագիտություն, գիտահետազոտական գործունեություն, անասնաբուժական ծառայություններ)	1	25	1	25	2	50	0	0	4
12. Ստեղծագործական ծառայություններ (դիզայն, լուսանկարչություն, տեսանկարահանում, վեբ դիզայն, սոցիալական մեդիա, միջոցառումներ)	7	100	0	0	0	0	0	0	7
13. Հանրային սննդի կազմակերպում, ռեստորաններ, սրճարաններ, բարեր և այլն	8	53,3	7	46,3	0	0	0	0	15
14. Կացության կազմակերպում, հյուրանոցներ, հյուրատներ և այլն	6	50	3	25	3	25	0	0	12

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

15. Սպասարկման ծառայություններ (վարսավիրական, լվացքատան, ԱԳԼՃԿ, բենզալցակայաններ, ավտովերանորոգման, փոքր վերանորոգման ծառայություններ)	47	100	0	0	0	0	0	0	100
16. Զբոսաշրջություն, զբոսաշրջային և ամրագրման գրասենյակներ	8	100	0	0	0	0	0	0	8
17. Վարչական և օժանդակ ծառայություններ (վարձակալություն, լիզինգ, զբաղվածություն, անվտանգության և հետաքննական ծառայություններ, վարչական ծառայություններ)	2	100	0	0	0	0	0	0	2
18. Մանրածախ առևտուր	156	98	3	1.8	0	0	0	0	159
19. Մեծածախ առևտուր, շուկա, տոնավաճառ	2	100	0	0	0	0	0	0	2
20. Կրթություն	3	100	0	0	0	0	0	0	3
21. Առողջապահություն և սոցիալական սպասարկում, դեղատներ	33	100	0	0	0	0	0	0	33
22. Մշակութային ժառանգություն, սպորտ, զվարճությունների և հանգստի ծառայություններ	0	0	10	100	0	0	0	0	10
23. Տրանսպորտ	20	80	5	20	0	0	0	0	25
24. Թափոնների կառավարում	0	0	0	0	0	0	0	0	0
25. Կարի արտադրություն, սննդի պատրաստում և իրացում	21	75	1	25	0	0	0	0	22
Ընդամենը	391	87,5	45	10,1	11	2,5	0	0	447

տեղական տնտեսության երեքական ուժեղ և թույլ կողմ

Ուժեղ կողմ	ԹուօՅԼ կողմ
1. Հին, ավանդական մառանների առկայություն	1. Չունենք կացարաններ
2. Հանգստի գոտիների առկայություն	2. ռեստորանների անձնակազմի պատրաստվածության ցածր մակարդակ
3. Զրագործության ավանդույթ և փորձ	3 տուրիստական գրավչությունները վատ՝ անխնամ վիճակում են

6. 2 Տեղական համագործակցություն

Աշտարակում գործող ձեռնարկությունները չեն ունեցել համագործակցության պաշտոնական՝ ֆորմալ ձևակերպված՝ իրավական ձև: Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ որպես կանոն աշխատում են գործարարների անձնական կապերը:

Առանձին գործարար միջոցառումներ է կազմակերպում ՀՀ առևտրա արդյունաբերական պալատի Արագածոտնի մասնաճյուղը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել որ Աշտարակում առայժմ չկա բիզնեսը միավորող, և բիզնեսին ծառայություններ մատուցող որևէ կառույց: Այդ դերն է ստանձնել քաղաքապետարանը հանձինս տնտեսական զարգացման պատասխանատուի ջանքերի:

Հյորենկալության ոլորտի և այլ ծառայություն մատուցողների հետ աշխատում ենք զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակում: Հուլիսի դրությամբ մենք միավորում ենք Աշտարակի շուրջ 25 գործարարների որոնք ներկայացնում են մասնավոր հյուրատներ և հացատներ, մառաններ և ռեստորաններ: Իրենց համար կազմակերպում ենք վերապատրաստման դասընթացներ, սկսնակ գործարարների (CEFE) գինեգործության, ինչպես նաև հյուրատների կառավարման:

Համայնքի գործարարների հետ ծանոթանալուց հետո ձգտում ենք կազմակերպել ոլորտային կանոնավոր հանդիպումներ որոնց ընթացքում քնարկվում են համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը և տեսականին: Նախատեսվում է մշակել ծրագիր արտաքին շուկաներում Աշտարակի արտադրանքը արտահանելու ուղղությամբ: Նախորդ տարվանից հաջողվել է նոր կապեր ստեղծել սալորի, ծիրանի չիրն արտահանողների համար: Հիմնական շուկան ՌԴ խանութներն են:

Ներկայացված արդյունքներին զուգահեռ, նշենք մեզ դեռ չի հաջողվել արդյունավետ համագործակցություն հաստատել համայնքի ռեստորանների հետ: Քանի որ համայնքի տնտեսական տեսլականի մեջ մենք նախատեսում ենք Աշտարակը դարձնել խոհարարական զբոսաշրջության “մայրաքաղաք”, ապա այս հատվածի հետ համագործակցությունը դեռ առջևում է: Մեր կարծիքով բիզնեսի այս ոլորտը խուսափում է համագործակցությունից, դեռևս չունենալով նման համագործակցության դրական օրինակ: Հույս ունենք որ մառանային գինեգործների փորձը իրենց համար էլ համագործակցության խթան կհանդիսանա:

Պլանավորել ենք այս տարվա նոյեմբերից շարունակել հանդիպումները ռեստորատորների և տնօրենների հետ բացատրելու համագործակցության փոխադարձ շահավետ կողմերը և համատեղ գործողությունների ծրագիր մշակել:

Աղյուսակ 3. Տեղական գործընկերության գնահատում

Անվանումը և/կամ գործառույթը (ոլորտը/թեման, որի շուրջ գործընկերություն են աշխատում է)	Ներառված հաստատությունները/անձիք	Զեռքբերումները (այստեղ ցույց տվեք նաև, թե ինչպես է այն իրագործվում, օր.՝ պլանավորման փուլում, նախագծերի իրականացում, ծառայությունների մատուցում, գործում է մշտական կամ ոչ մշտական/պարբերական հիմքերով)	Գնահատակա ն՝ օգտակար կամ ոչ օգտակար
---	-------------------------------------	--	--

Գինու փառատոնի կազմակերպում ⁴	Armenia Wine, ArmAs, Vine Ardi, Ոսկեվազ, Պռոշանի գինու և կոնյակի գործարան: Մառաններ՝ Սեդրակ Եգանյան, Արծրուն Գևորգյան, Հովսեփ Ղալաչյան,	2018թ. սեպտեմբերի 2-ին Աշտարակում անցկացվեց “Գինի և մշակույթ” փառատոնը: Մասնակցեցին նշված բոլոր գործընկերները: Ունեցանք տեղացի հուրեր և արտասանմանցի՝ ՌԴ, Գերմանիա, Անգլիա, Բելգիա զբոսաշրջիկներ: պայմանավորվեցինք այս փառատոնը դաժնել ավանդական:	Օգտակար և արդյունավետ
Գիտահեն արտադրության իրենց ինստիտուտի փորձը ինչպես նաև համայնքի հետ համագործակցության հնարավորությունը:	ՀՀ ԳԱԱ ՖՀԻ տնօրեն պրն Արամ Պապոյան:	Բացահայտվեց մասնագիտացված մարքեթինգային կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը որը պետք է համապատասխան շուկաներ գտնի ինստիտուտի կողմից մշակումների և հետազոտությունների համար, ինչպես նաև նոր պատվիրատուներ որոնի:	
Գյուղմթերքի՝ չրեդենի, քաղցր սուջուխի և այլ վերամշակում և վաճառք:	Ագրոլոգ, տնայնագործ չիր արտադրողներ՝ Կարապետ Պետրոսյան – Մուղնի:	Հանդիպել ենք չիր արտադրող անհատների հետ իրենց ապրանքը արտահանելու և ծավալների ավելացման խոչընդոտների բացահայտման համար: Պարզվեց որ այս պահին անհատ արտադրողները չեն կարող ապահովել անհրաժեշտ ծավալներ և գնորդի ստանդարտներին համապատասխանող որակ: Պայմանավորվեցին շարունակել համագործակցությունը այս ուղղությունը զարգացմանելու և համայնքի արտադրանքը արտաքին շուկայի	օգտակար

⁴ Նշված ընկերությունները թեև ֆորմալ առումով չեն հանդիսանում Աշտարակ համայնքի բիզնեսներ, սակայն իրենց կարևոր դերակատարումն ունեցան համայնքում մառանային զինեգործական տուրիզմի և գինու փառատոնի հաջող իրականացման համար: Ուստի իրենց հետ սերտ համագործակցությունը կարևոր ենք համարում համայնքի տնտեսական զարգացման համար:

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

		պահանջներին համապատասխան ներկայացնելու համար:	
ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամ	ՓՄՁ-ներ, բանկեր	Բոլոր փուլերում	օգտակար
Ոչ ֆորմալ խումբ՝ ՄԱԿ-ի ծրագիր – գործարարներ GIZ	Դոնորներ, գործարարներ, ՏԻՄ	Հյուրընկալության ոլորտի պլանավորման և իրականացման փուլերում	օգտակար
ՏՏՁ խորհուրդ (ՏՏՁ պլանի կազմում)	Գործարարներ, ՀԿ-ներ, ՏԻՄ	Բոլոր փուլերում, հիմնունքներով	օգտակար

Տեղական համագործակցության երկուսական ուժեղ և թույլ կողմ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1. ՏԻՄ-ի կողմից բիզնեսի կարիքները հասկանալը	1. ՏԻՄ-ը չունի լուրջ իրական ֆինանսական լծակներ բիզնեսին աջակցելու համար
2. Բիզնեսը տեսել է ՏԻՄ-ի աշխատանքի արդյունքը և սպասում է հաջորդ քայլերին:	2. Գործարարները լավ չեն պատկերացնում իրենց շահը ՏԻՄ-ի, ինչպես նաև իրար հետ համագործակցելու:

6.3 Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն

Աշտարակի քաղաքապետարանի նոր՝ 2016 թվականին ընտրված աշխատակազմը ապահովում է բաց և թափանցիկ վարչարարություն համայնքի բոլոր բնակիչների, այդ թվում գործարարների համար:

Համայնքապետարանի կայքէջում օրենքով սահմանված կարգով և ժամանակին տեղեկատվություն է տեղադրվում բոլոր որոշումների և նախաձեռնությունների վերաբերյալ: Գործարարները հնարավորություն ունեն ծանոթանալու իրենց գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը, այդ թվում համայնքի կողմից և նախաձեռնությամբ իրականացող տնտեսական զարգացման ծրագրերի վերաբերյալ:

Ստորև ներկայացվող աղյուսակում ներկայացված են գործարարների հետ հանդիպումների և քննարկումների ընթացքում բացահայտված խնդիրները:

Աղյուսակ 4. Զարգացող ոլորտները (ենթաոլորտները) և դրանց խնդիրները

(Զարգացող) Ոլորտ (ենթաոլորտ)	Հիմնական խնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ է աջակցություն տրամադրել բիզնեսին
Ռեստորաններ	Անձնակազմի ցածր պատրաստվածություն՝ չգիտեն սպասարկման, մատուցման կանոնները: Խոհարարները ծանոթ չեն աշտարակյան ավանդական բաադրատոմսերին:
Զբոսաշրջության ոլորտ	Դեպի տուրիստական գրավչություններ տանող քանդված ճանապարհներ: Չկան հյուրանոցներ և բավարար քանակությամբ հյուրատներ: Չունենք օտարալեզու պատրաստած գիդեր: Համայնքի տարածքում կան ոլորտի զարգացման համար խիստ բարենպաստ շինություններ և տարածքներ որոնք չեն պատկանում համայնքին, բայց տարիներ շարունակ որևէ կերպ չեն օգտագործվում ներկա սեփականատիրոջ՝ պետության կողմից:
Գիտահեն արտադրություն	Մասնագիտացված մարքեթինգային կենտրոնի անհրաժեշտություն:
Գյուղմթերքի վերամշակում	Արտադրողները ծանոթ չեն գոյություն ունեցող ստանդարտներին, չնչպես նաև արտահանման կարգին: Մոտիվացված չեն ավելացնելու քանակը:
ՏՏ ոլորտ	Գործող բիզնեսները կգան համայնք առավել մատճելի և հարմարավետ պայմաններ ստանալու դեպքում:
Ընդհանուր խնդիրներ	Համայնքը չունի բիզնեսի պահանջնարին համապատասխանող ազատ շինություններ:

Ներկայացված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝

- Պետությանը պատկանող տարածքների առավել նպատակահարմար օգտաործում:
- Անձնակազմի վերապատրաստման դասընթացներ:
- Մասնագիտացված մարքեթինգային կենտրոնի ստեղծում: Արտահանման ռազմավարության մշակում:
- Պետական ծրագրեր համայնքի տուրիստական-պատմական ժառանգություն հանդիսացող օբյեկտների վերականգնման ուղղությամբ:

Բիզնեսին ուղղված, թափանցիկ և կոռուպցիայից զերց վարչարարության երկուական ուժեղ և թույլ կողմ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1. միջազգային դոնորների հետաքրքրվածությունը և համագործակցությունը:	1. Ծրագրերի մասին իրազեկության պակաս
2. աճում է համայնքի հետաքրքրությունը իրականացվող ծրագրերի նկատմամբ:	2. Պետական աջակցության բացակայություն:

6.4 Ֆինանսական միջոցների հասանելիություն

Համայնքի գործարարների հետ հանդիպումների ընթացքում բացահայտվել է որ ոչ բոլորն են կարողանում ստանալ տեղեկություն իրենց բիզնեսի զարգացման համար հասանելի ֆինանսական միջոցների վերաբերյալ:

Ինչպես նշեցինք նախորդ բաժնում Աշտարակում ներկայացված են Հայաստանի 17 բանկերից 12 –ը (70%), 39 վարկային կազմակերպություններից 4-ը (31%), և 9 ապահովագրական ընկերություններից 7-ը (78%):

Ըստ այս ցուցանիշների կարելի է ենթադրել, որ համայնքը չունի ֆինանսների հասանելիության խնդիր, սակայն նշված կազմակերպությունների/մասնաճյուղերի կառավարիչների հետ ունեցած զրույցների ընթացքում պարզվեց որ գործարարների մեծ մասի համար այդ միջոցները հասանելի չեն բարձր տոկոսադրույքի, իսկ մյուսներին էլ՝ արտարժույթով վարկավորման դեպքում, արտարժույթի կուրսի տատանումների պատճառով:

Ոլորտի ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների ընթացքում պարզվել է, որ կան մարդիկ ովքեր ունեն գործարար գաղափարներ, և պատրաստ են իրականացման համար վարկ վերցնել, եթե վարկավորման պայմաններն ավելի մեղմ՝ ցածր տոկոսադրույք, մարման ճկուն՝ գյուղական պայմանները (եղանակի, բերքի և կենդանիների հիվանդությունների) հաշվի առնող վարկային գծեր լինեն: Սակայն նման հարցերը իրենց՝ մասնաճյուղերի կառավարիչների իրավասությունից դուրս են, և ուղղակիորեն կապված են իրենց բանկի, ինչպես նաև ՀՀԿԲ քաղաքականության հետ:

Ամփոփելով նշենք որ հետաքրքրվող գործարարները կարողանում են տեղեկություն ստանալ նաև ֆինանսավորման այլ՝ պետական աջակցման ծրագրերից (ՓՄՁ ԶԱԿ-ի վարկային երաշխիքներ, սկսնակների ֆինանսավորում, գյուղատնտեսության սուբսիդավորման ծրագրերից) աղբյուրների վերաբերյալ, սակայն գտնում են որ այդ տեղեկությունը այնքան էլ հասանելի չէ:

Աղյուսակ 5. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

Հաստատություն/ դոնոր (ներառյալ՝ բանկեր և այլ վարկային կազմակերպություն ներ)	Հնարավոր հաճախորդ ներ/ շահառուներ	Նախընտրելի տնտեսական ոլորտներ/ գործունեություն	Հատկացվելիք գումարի նվազագույն և առավելագույն չափ	Պահանջն եր (գրավ և այլն)
Բանկ/մասնաճյուղ	ՓՄՁ գործարարն եր, անհատ ձեռնարկա տերեր	գյուղատնտեսու թյուն, շինարարություն, փոքր արտադրություն, առևտուր	Գյուղվարկերի 4 մլն: Բիզնես վարկերի 10 մլն: Սահմանափակում ները կախված են բիզնեսից	Երաշխավո ր, կամ գրավ կախված վարկի չափից

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

Վարկային կազմակերպություններ	Միկրո բիզնեսներ	Առևտուր և սպասարկման ոլորտ	50000 –ից 2 մլն.դրամ	Երաշխավոր
Պետական ծրագիր՝ արտոնյալ վարկավորում	ՓՄՁ, գյուղատնտեսության	Սպասարկում, արտադրություն, հաս. Սնունդ:	5 մլն.դրամ կամ \$10000	Բիզնես պլան, երաշխավոր
Միջազգային դոնորների դրամաշնորհներ	ՓՄՁ	Սպասարկում, արտադրություն, հաս. Սնունդ:	\$10000	Բիզնես պլան
Պետքյուջե՝ դրամաշնորհների, սուբսիդիաների և սուբվենցիաների մասով	ՏԻՄ, Գործարար հատված	Համայնքային տնտեսական ծրագրեր, ներդրումային ծրագրեր	Առավելագույնը՝ 75 մլն., կամ կախված սեփական ներդրման չափից:	Հայտ, նախագիծ , բիզնես պլան

Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ուժեղ և թույլ կողմերն են.

Ուժեղ կողմ	Թուօձ կողմ
1.Բանկային-ֆինանսական ոլորտի հնարավորություններ	1. Բանկային-ֆինանսական կազմակերպությունների ոչ ճկուն քաղաքականություն: Գրավի պայման:
2.Ֆինանսական տարբեր աղբյուրների հասանելիություն	2.Վարկի մարման պայմանները չեն ադապտացվում համայնքի իրական վիճակին:

6.5 Հող և ենթակառուցվածքներ

Համայնքի տնտեսական զարգացման կարևոր գործոններից է նաև բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ հողի և ենթակառուցվածքի առկայությունը: Համայնքի բոլոր հողերը նույնականացված են, կարելի է ասել որ Աշտարակը չունի բիզնեսին հետաքրքրող՝ համայնապատկան ազատ/չօգտագործվող հողատարածքներ, շինություններ կամ ենթակառուցվածքներ:

Բիզնեսի որոշ տեսակների զարգացման համար հետաքրքիր կարող են դառնալ Աշտարակի վարչական սահմաններում՝ Գիտավանի տարածքում գտնվող ՀՀԳԱԱ ինստիտուտներին պատկանող վարձական և լաբորատոր

չօգտագործվող տարածքները որոնք կարելի է օգտագործել բիզնես ինկուբատորների, ՏՏ ոլորտի ստարտափների, գրասենյակային և արտադրական նպատակներով:

Այս պահին դժվար է ասել թե որքան մակերես կարող եմ առաջարկել ինստիտուտները, սակայն իրենց հետ ունեցած քննարկման ժամանակ խոսքը մեկ-երկու առանձին մասնաշենքերի մասին էր:

Աղյուսակ 6. Հողի և ենթակառուցվածքների նկատմամբ մասնավոր հատվածի կարիքները

Մասնավոր հատվածի կարիքները՝ ըստ ենթակառուցվածքների տեսակների	Ոլորտում առկա պայմաններ	Հետագա հնարավոր կարիքներ (6 տարվա կտրվածքով)	Հանրային սեփականություն/վայրեր, որոնք կարելի է զարգացնել
Միկրո ընկերություն կամ անհատ ձեռներեցի աշխատատարածք՝ համատեղ օգտագործման ընդհանուր հարմարություններով կամ առանց դրանց	չկան	Կառաջանա պահանջ	չկա
Գրասենյակային տարածք՝ համատեղ օգտագործման ընդհանուր հարմարություններով կամ առանց դրանց	չկա	Կառաջանա պահանջ	չկա
Ձեռնարկությունների ինկուբատոր (< 10 սկսնակ/միկրո ընկերություններ, > 10 սկսնակ/միկրո ընկերություններ)	Չկա	Կառաջանա պահանջ	չկա
Ձեռնարկությունների/ արդյունաբերական	Չկա	Կառաջանա պահանջ	

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

պարկ			
Պատմական թեմատիկ ամրոց	Գտնվում է համայնքի տարածքում	Կառաջանա պահանջ:	Անհրաժեշտ է աշխատել ՀՀ կառավարության հետ նշված տարածքը նպատակային օգտագործման համար համայնքին փոխանցելու առաջարկով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
1. Համայնքի տարածքում գործող հաստատություններին պատկանող ազատ գրասենյակային և արտասրական տարածքներ:	1. համայնքապատկան ազատ տարածքների բացակայություն
2. Համայնքի տարածքում գտնվող՝ երկար ժամանակ չօգտագործվող պատմական ծինություններ:	2. Առկա փոքրաթիվ շինությունների վատթար վիճակ

Այս բաժնում ներկայացված խնդիրների լուծման համար նախատեսվում ենք՝

1. բանակցել և համագործակցել ՀՀ ԳԱԱ վերոնշված ինստիտուտների ղեկավարության հետ, բիզնես ինկուբատորների ստեղծման ուղղությամբ: Համայնքն այս դեպքում կարող է ֆինանսական միջոցներ հայթայթող կողմ դառնալ, իսկ ինստիտուտը կտրամադրի համապատասխան տարածքներ:
2. աշխատել ՀՀ կառավարության համապատասխան կառույցների հետ համայնքի տարածքում գտնվող և երկար ժամանակ չօգտագործվող, պատմական արժեք ներկայացնող տարածքներն ու շինությունները համայնքի փոխանցելու ուղղությամբ:

6.6 Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Աշտարակ համայնքի լիազորությունների շրջանակում գտնվող կարգավորումներն ու տարբեր կարգի թույլտվությունների մասով մեր գործարարները չունեն խոչընդոտներ կամ չհիմնավորված ձգձգումներ: Իր լիազորությունների շրջանակում համայնքը պարզեցրել է նաև սկսնակ բիզնեսների գովազդային ցուցնականների համար տրվող թույլտվության կարգը: Սակայն գործունեության որոշ տեսակների համար անհրաժեշտ է լինում հավաքել Երևանում գտնվող տարբեր գերատեսչությունների լիազորությունների շրջանակում գտնվող անհրաժեշտ փաստաթղթեր:

Մեր գործարարները որոշ առավելություն ունեն համայնքի Երևանին մոտ գտնվելու առումով:

Կարևոր է բացատրել գործարարներին որ մեր երկրի համայնքների լիազորությունները շատ ավելի նեղ են քան գործարարը կարող է պատկերացնել, և իրականում սահմանափակվում են հողի և գույքահարկի հարցում որոշ մեղմացումների:

Կարծում ենք որ այս խնդիրն ընդհանուր է բոլոր համայնքների համար:

Աղյուսակ 7. Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Կարգավորման ոլորտի մարտահրավերներ	Բացասական ազդեցության բարձր/ցածր աստիճան	Հիմնական կարգավորող մարմին	Խնդիրները տեղական մակարդակում մեղմելու/բարելավելու հնարավորություն (մանրամասներ)
Բիզնեսի գրանցում		ՏԻՄ	Բացատրական աշխատանք ՏԻՄ-ի աշխատակիցների հետ, և գործարարների տեղեկացվածության մակարդակի բարձրացում:
Շին թույլտվություններ տրամադրելու գործընթաց	ցածր	ՏԻՄ	Բացատրական աշխատանք ՏԻՄ-ի աշխատակիցների հետ, և գործարարների տեղեկացվածության մակարդակի բարձրացում:
Հարկային մասհանումների բացակայություն /անհամապատասխանություն	Բարձր	ՀՀ Կառավարություն, ԱԺ	Առաջարկների ներկայացում հիմնավորումներով
Համայնքի ներգրավումը	Բարձր	Կառավարություն	Առաջարկների

**Տեղական տնտեսական զարգացման պլան
[Աշտարակ]**

պետական հողերի և ենթակառուցվածքների օգտագործման որոշումներին		ն, ԱԺ	ներկայացում հիմնավորումներով
Բիզնես գործառույթների վերաբերյալ փաստաթղթերի շրջանառության պարզեցում	Ցածր	ՏԻՄ	Փաստաթղթերի առցանց շրջանառության ընդլայնում, ժամկետների կրճատում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
Գործարարների վստահությունը ՏԻՄ-ի նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում ՏԻՄ-ի աշխատակիցների աջակցությունը:	ՏԻՄ-ի իրավասության շրջանակներից դուրս գտնվող խնդիրները: Որոշ տեղեկությունների թույլ կարգավորումը մարզային և պետական մակարդակներում:

6.7 Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն

Մարդկային ռեսուրսների զարգացման խնդիրը շատ կարևոր է բոլոր համայնքների համար: Աշտարակի դեպքում հստակ ազդեցություն ունի Երևանին մոտ լինելը: Քանի որ մայրաքաղաքը ավելի շատ և ավելի լայն ընտրություն է առաջարկում աշխատանքի տեղավորման հարցում: Հաշվի առնելով այն հանգամանքը որ աշտարակցին աշխատելով Երևանում չի փոխում իր մշտական բնակության վայրը, ինչպես նաև պահպանում է իր կենցաղն ու ապրելակերը, ուստի Երևանը ”քաշում է” երիտասարդներին ինչպես ուսանողական տարիներին, այնպես էլ դրանից հետո շրջանավարտների մեծամասնությունը ձգտում է աշխատանք գտնել հենց մայրաքաղաքում:

Աշտարակը չունի որևէ ԲՈՒՀ, կամ դրա մասնաճյուղը:

Համայնքի համար հեռանկարային հանդիսացող հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունների համար մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է կարճաժամկետ մասնագիտական դասընթացների ձևով: Այս տարի արդեն վերապատրաստում են անցել 25-ից ավելի սկսնակ գործարարներ ՀՀ ՓՄՁՁԱԿ-ի սկսնակ գործարարների ծրագրով:

Այս հարցում շատ կարևոր է տեղեկացած լինել Հայաստանում գործող կազմակերպությունների ծրագրերին, և համագործակցել այդ կառույցների հետ: Մասնավորապես մեզ հաջողվել է համագործակցություն հաստատել ՄԱԿ-ի գյուղական տուրիզմի ծրագրի հետ, ինչպես նաև ԳԴ GIZ կազմակերպության հետ:

Այս տարվա գարնանը Աշտարակում անցկացվեց աշխատանքի ցուցահանդես որին մասնակցում էին 22 կազմակերպություն: մասնակիցների գնահատականով և Աշտարակի զբաղվածության կենտրոնի աշխատակցի հետ հարցազրույցի ընթացքում պարզեցինք տարեսկզբին Աշտարակի աշխատուժի շուկայում առկա պահանջարկն ըստ ոլորտների:

- Բիզնես ծառայություններ –2
- Շինարարություն –8
- Առևտուր –5
- Զբոսաշրջություն – 4
- Հյուրանոցներ - 2
- Ռեստորաններ – 3

Աղյուսակ 8Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը

